

ԲԺ. Գաբրիէլ Տէր Յովհաննիսեանի ձեռագիր տետրեր:

3. Ն Ո Ր Վ Կ Ա Ն Ե Ր

Հասարակ թղթի վերայ նոսր գրուած, քառածալ, ծաւալ 16×13 սմ. 77 եր. ունի յիշատակարան եր. 76—77. որի մասին յետոյ:

Տետրակը չունի վերնագիր, բայց մենք այդ անունը տուինք ի նկատի ունելով բովանդակութիւնը, որ է.

1. Յաղագս նահատակութեան Աճէմ օղլի Նուրիջան երջանիկ վկային Ք^ժօի, ասացեալ ի հնձացի Մարտիրոս Եպիսկոպոսէ: Աճէմ օղլին նահատակուած է Հայոց 1070 և Փրկչի 1621 թ. նահատակութեան ժամանակ Փիլիպպոսը դեռ Կաթողիկոս չեղած, իբրև նուիրակ Կարինումն էր. (եր. 1—4.)

2. Դարձեալ ի վերայ նոյն նահատակին, ասացեալ ի Կարապետէ. (եր. 5—6)

3. Յաղագս միւս նահատակին Յակոբայ Կարնեցւոյ, որ կատարեալ ի սոյն Կարին քաղաք. ի Յակովբ քահանայէ ասացեալ: (եր. 6—14):

Այս երեք վկայաբանութիւնները չեն տպուած «Հայոց Նոր Վկաներ» գրքում.

4. Վկայաբանութիւն Սրբոյն Բաղդասարայ Նոր Վկային (եր. 14—22), ժող. Տպ. բ. հատ եր. 152—156:

5. Յաղագս Սահակ անուն ումնմն անմեղ մանկան Մար Կոչեցելոյ (եր. 22—41). տպուած ժող. բ. հատ. եր. 223: Միակ տարբերութիւնը այն է, որ տետրակի զրիչը սրբագրութիւններ է արել՝ թուրքերէն բառերը մեծ մասամբ հայերէն թարգմանելով, գրուածքի ոճը յզկելով, և յաւելումներ անելով, որով գրուածքը աւելի ամփոփ և գրական ձև է ստացել:

6. Կարնեցի ոմն Յարութիւն անուն երիտասարդ նահատակեալ յիգմեր քաղաքի... եր 42—51, տպուած ժող. հատ. բ. եր. 265:

7. Յաղագս Վառվառ Կուսին. ոտանաւոր. եր. 51—68 տպուած ժող. բ. հատ. եր. 287—313. տարբերութիւնը սրբագրած.

8. Մատիք առ Տէր և առէք զլոյս. Յոյժ գեղեցիկ երևեցաւ նախախնամութիւն Աստուածային նախարարի միում այլազգւոյ ի ձեռն զիպուածոց հրաշալեաց նախընթացից և հետևողաց:

Զէ տպուած եր. 69—76:

*) «Հայոց Նոր Վկաներ» հատ. Ա. 1135—1483 թ.) և հատոր բ. (1486—1845 թ.), կազմեցին Յ. Մանանդեան և Լ. Աճառեան Կրկին հրատարակութիւն—գիտական և ժողովրդական, 1902 թ. Ս. Էջմիածին:

Յիշատակարան

«Արարեցեալ ժիպասանութիւնքս սակ» Արքոյ նոր կատարելոցն վկայական մահուամբ «յանձանց պաշտօնասիրաց ըստ եկեղեցական կարգաւորութեանց, որոց անուանք միանգամայն յայտնին ի մակագրութեանց իւրաքանչիւրոյ պատմութեան թուով և ժամանակաւ. թէպէտ ըստ ուղղախօսութեան բարբառոյս ևն անվաւեր՝ բայց ըստ մտացն զօրութեան և իւրաքանչիւրոյ ջերմեռանդ աշխատութեան ըստ կարեաց վաւերական վարկանելի է. վասնորոյ կարեօր վարկայ և ես քրանաջան աշխատութեամբ զաւանդեալսն ի նոցանց զինչ և իցէ անվրէպ պահել և ոչ փոփոխել յայլ ձե ըստորովին անկարգ համարելով և զաշխատութիւնս նոցա կորուսանել հպարտացեալ դիտութեամբ. քաւ լիցի և մանաւանդ զյարգանս մեծարանաց արանց աշխատասրաց կողոպտել և առնել յիմ անուն ըստ աւագակարարոյից, զոր չէ արժան, որովհետեւ իւրաքանչիւր ումեք տուեալ է յայանութիւն ի հոգւոյն ըստ Պօղոսի ի խնդրոյ ձերունազարդ Արքահամ վարդապետի կարնեցւոյ և արդէն իսկ միաբանի սրբօ վանից Հառիճայի և արդեամբ նորին վեր առեալ հաւաքի յամենից յեանոյ յումեմնէ Մինասայ իբր դպրէ ի փառս և ի պատիւ վասն մեր մարդացեալ Բանին Աստուծոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, և ի զուարճութիւն ընթերցողացն հոգեպէս ի 1844. և օգոստոսի 10, ի վանս Ս. Աստուածածնի:

Գրիչ զպիւր Մինասի համար մեր բարեկամ, Կարսում վերաբնակող Տ. Մինաս աւագ քհնյ. Տէր Պետրոսեանը գրում է.

«Ղփչաղեցի Մինաս քհնյ. Յարութիւնեանցը, որ իմ ուսուցիչն էր, Կարնոյ դաղթական Կօլտա մականունեալ Յարութիւնի որդին էր: Նա ուսել էր Ս. Էջմիածնի ժառանգաւորաց ուսումնարանում հանգուցեալ Մակար Կաթողիկոսի ընկերակցութեամբ, կուսակրօն դառնալու զիտաւորութեամբ, բայց աւարտելուց յետոյ փոխելով իւր մտադրութիւնը, վերադառնում է Ղփչաղ և պարապում մասնաւոր անհատներին ուսուցանելով: Նա ձեռնադրուած է 1851 թուականի վեարուարի 17-ին քհնյ: Հառիճոյ ընկերութեան կաղմուելու օրից առաջ նոյն իսկ, նա առանձին հոգս է ունենում վանքի վերայ. ընկերութիւնը տեսնելով նրա անշահասէր և ներքին համոզմունքով աշխատութիւնը, խնդրեց նրան, որ իւր կողմից վերահսկող լինի ընկերութեան ձեռնարկած գործերին և շինութիւններին: Ընկերութիւնը նրան գտնելով իրա մտադրուած նպատակին կարելի շահաւէտ, մի փոքր ռոճիկ է նշանակում նրան ուսուցչութեան համար: Երբ ես ուսանում էի նրա մօտ 57 թուականին, ինձ հետ կային սովորողներ Շիրակի զանազան

գիւղերից մի քանի հասակաւոր քահանայացուներ. դաս էինք առնում նրանից մի օր վանքի սենեակներից մէկում, մի օր իւր տանը և այլն, ըստ որում տակաւին ընկերութիւնը ուսումնարանական բնակարան չունէր և նրա նիւթականն էլ այնքան միութարական չէր: Ուսումնարանական տուն շինուելուց յետոյ՝ նա արդէն ունէր ուսուցիչ ընկերներ ևս: Նա շարունակեց իւր ուսուցչական պաշտօնը մինչև գրեթէ իւր մահը, որ տեղի ունեցաւ, եթէ չեմ սխալոււմ, 1876 թուականին: Նա գրաւոր երկասիրութիւն չէ թողել բացի մի քանի ոտանաւորներից (երգերից): Այնոս, որ այժմ ձեռքումս չունիմ, կուղարկէի դադարիւր կաղամբու համար:

Գրքի սկզբում և վերջում արարական կամ լաւ ևս տաճկական թուանշաններով գրուած է ստացողի անուն ու ազգանունն ըստ այսմ՝

Ա. Բ. Բ. ա. հ. ա. մ. վ. ա. Բ. Գ. ա. պ. և. տ. Մ. ա. լ. խ. ա. ս. ո. վ. ո. Բ. է. կ. ա. Բ. ն. և. ց. ի:

Այս Աբրահամ վարդապետը ժ.թ. դարի սկզբում մինչև 1828-30 թուի ուսումնական պատերազմն ու դրան հետևող Կարնոյ դաղթականութիւնը Կարնոյ թեմի Կարմիր վանքի վանահայր է եղել: Գաղթականութեան հետ գալով Շիրակ, տեղաւորուել է Հառիճայի վանքում: Այս Աբրահամ վարդապետին պատկանելիս են եղել հաւանօրէն բժ. Գաբրիէլ Տէր Յովհաննիսեանի ձեռագիր տետրերն ու թերթերը, և ինչպէս երեւում է, հնասէր պ. բժիշկը փրկել է կորստից այդ ձեռագրերը ստանալով Փեշտամալճեան Յովհաննէս վարդապետից, որ Կարնոյ դաղթական Շիրակացի էր և Հառիճայի միաբան վանահայր: Ներկայ տետրի ա. երեսի լուսանցքում կայ փեշտամալճեանց «բառը»

Իբրև շարունակութիւն Հայոց նոր վկաների, չտպուածները տպում ենք Արարատում: Յ. Ա. Ե.

1. Յաղագս Նահատակութեան Անեմոլի Նուրիջան Եղջանիկ վկային Ք.սի. ասացեալ ի Հնձացի Մարտիրոս Եպսկ:

Ի բաղանիս ըն լուացար քեզի համար տային զբոլոց,
և ի բանտին իսկ սրբեցար երբ որ ինքս տարան դրուց,
ըզքեզ ի հուրն ընկեցեր թէ մեզ հաւոր քուֆր և յիշոց:
և քան զասըր սուրբ մաքրեցար: Վճիռ և հատ Ալի զատին,
Այս է խորհուրդ գրոց սրբոց, թէ թող այրի մէջ կրակին:

առաջ զհանդերձն մերկայուցին
ապա առին զզլխոյ դօտին:

Ի մէջ բանտին անսեր զերազ,
զքեզ ի դրախտն առջնդ զգաս,
դու քահանայ քեզ կոչեցեր,
ապա առեր հաղորդ և մաս:

Երկու շարթի օր մտանք պաս՝
զնա բռնեցին տարան ի հափս.
հինգ շարթին որ լուսացաւ՝
մէջ կըրակին դրին զաֆաս:

Յոռքն գրին երկաթ ամուր,
եղըն հալէր թափէր քան ջուր,
քո էնողին երեսն մուր,
յայն կեանքն եղև քո տեղն դուր:

Երկչոտութիւն եղեր ի բաց,
կատարեալ սէրն զերկիւղն
մերժեաց.

բանք սաղմոսին չեթող ձեռաց,
նոր նահատակ, սէրդ առ Ա.^ժ
Գառի նման հայէր բոցոյն,
աչօք տեսնուր զվէրս խոցոյն.
նայէր ի յաջ և ի յահեակ՝
մանր աղոցն կըսկըծուն:

Դու քաշեցեր շատ բոց և տապ,
ով որ լսէ առնու առապա*.
բոլոր մամինդ արիր քապապ**,
արքայութեան սիրուն սէպապ***:

Ի մէջ բոցոյն ճնց համբերեաց,

կարնոյ քաղաքն ի տես չարժեաց,
այ Նուրիջան նոր մարտիրոս,
դրախտին դուռն ինքն երաց:

Նոր էիր դու քառսուն տարուն,
ոչ մեկնեցար աիրով սիրուն,
մեզ վարդ բուսար յետին դարուն,
զձմեռն արեր որպէս գարուն:

Եէնկիշարիքն բերթէն ի դուրս
առաւօտուն տեսին ըզլոյս,
քոյ ս^ժ մասունքն ժողովէին
թէ պահնք տանք ի այս զընոյս:

Պահապանքն բերթէն երկուս,
որք շուրջ գային ի պարսպունա՝
նորա եղեն մեզ վկայ յոյս
թէ շուրջ մասամբն պատեալ էր

լոյս:

Քիչ զովելոյս ասեմ ափսոս
և անարժան եպիսկոպոս,
քառասնորդաց առջի շարթուն,
մեզի եղեր նոր մարտիրոս:
Ես Մարտիրոս, որ եմ Հընձուց,
չարեացն եղէ դարման և բուժ-
Ա.^ժ զքեզ դրախտն հմոյծ,
զի այրեցար օսկերբ և ծուծ
Քսան և մէկ յորելեանին
և ի քսան թիւ աւելին
այս բանս եղև Նուրիջանին,
ի պանծալի քաղաք կարին

2. Դարձեալ ի վերայ նոյն նահատակին ասացեալ ի Կարապետէ.

Տարեալ եղին յեկեղեցին,
ս^ժ միարան Ա.^ժ ծածնին,
նա բարեխօս քրիստոնէից,
և մանաւանդ հայոց ազգին:

Թաղեալ եղև ի խորանին,
որ ս^ժ Մինաս անուն կոչի
գերեզմանէն հրաչք լինին
բաղմաց, որ շատք աչօք տեսին:

Թալկացեալք իսկոյն բժըշկին,
որք հաւատով ի նա դիպին,
յայնժամ առնուն ըզլանդրելին
հայցմամբ սրբոյ Նուրիջանին:

Վեհին տեսեալ և քարոզեալ
ասէ, էի ես անդ կանգնեալ,
յայնժամ տեսի զլոյսն կանգնեալ
ո^ժպ եղեալ երից մանկանց:

*. Պատկառանք.

** Տապակ.

*** Պատմառով.

Զի էր նա սուրբ առաքինի,
 Փիլիպպոս անուն վերածայնի,
 կաթուղիկոս Հայոց ազգի,
 յաթոռն ս^բ էջմիածնի:

Ով զայս կարգայ ե աւարաի,
 նա յիւր մեղացն ազատ լինի:

Տէրն որ առաւն է ամանի
 պարգեւ տայ մարդկան ձրբի:

Ո՛վ սիրելի, դու զայս կարգա,
 ե գանարժան գծոցս յիշեա:

Վերջն սա ե մէկ Հայր մեր,
 որ զբրախտն դէպ մեղ մնայ:

Ինձ անարժան կարապետի,
 որ եմ գործովս ազատեղի,

Կ^ս աւերն մեր սգորմնացի,
 ի միւս անգամ իւր գալստի:

3. Յազոպս միւս նահատակին Յակոբայ Կարնեցոյ, որ կատա-
 րեալ ի սոյն Կարին քաղաք. ի Յակոբ քահանայէ տապեալ.

Յորժամ Ա^ս ծային՝ գութըն հայրական
 ե հուր սիրոյ Որդւոյ՝ իւր արարչական,
 Ամենասուրբ Հոգւոյն՝ շնորհ մաքրական
 բորբոքի իսկապէս՝ ի սիրարս մարդկան՝
 այնուհետեւ մերժի՝ երկիւղն մահուան,
 ե փարափ մտայն՝ խաւարի նիրհման.
 հեղուն զօրիւնս արիքն՝ ի սէր Փրկչին այն
 որ ծընաւ ի ս^բ կուսէն՝ բընութեամբ մարդկան:

Կենդանութեան աղբիւր՝ սիրոյ Ընտեմարան
 բնոյ զմտաց իմոյ, զանիմատութեան,
 զի գրաջ նահատակին՝ զայն Յակոբ անուան
 պատմեցից սակաւ ինչ՝ զանցից պատահման:

Որ էր ի քաղաքէս Թէոդուսովեան
 ե անուն հօր նորին՝ կոչիւր Ղաթման.
 ունէր կին ե որդիս՝ եղբարս երկուսեան,
 միջհասակ զոլով՝ քառասուն ամեան:

Բնաւ չէր տեղեակ՝ նա զրոյ ուսման,
 սոյ աշխատէր ի գործ՝ իւր դերձակութեան,
 ե այնու պատրաստէր՝ զառօրեայ լոմայն,
 լնոյր պէտքս կարեաց՝ իւր կարօտութեան:
 Թէպէտ ոչ էր նա՝ կարի հոգեջան,
 սակայն յարոյց նրմա՝ բանասերիւս աստան
 զայր մի շարաքարոյ՝ ե պիղծ գանիչման՝
 որոյ կոչիւր անուն՝ ըն միլա Օսման:

Առեալ յաւուր միում՝ զորդին իւր միայն
 ե գան ի միասին՝ առ նա ի չուկայն,
 նըստին առ նա խօսին՝ զիւրեանց կրօնից բան,

որպէս սուրբ են՝ հանապազորդեան։
Հարցանեն զայս ինչ՝ կերպիւ կատարման,
զի կամին փորել՝ նրմա գուր անկման,
ասեն, Յակոր վարպետ, զի կաս յամառման,
դարձիր այսուհետեւ՝ յօրէնս տաճկական։

Այլ նա յորժամ լըսէ՝ զչար համբաւն զայն՝
ակնարկէ առ նոսա՝ ծիծաղի լնդ այն,
և նոքա փարելով՝ զանձամբն նորայն՝
աղերսեն կատարել՝ գիւրեանց խօսեալ բան
նա քաղցրութեամբ ասնէ՝ նոցա պատասխան,
ասէ. ընդէր նեղէք՝ զիս այսօր այդբան,
չառ եմ լուեալ ի ձէնջ՝ ես այդպիսի բան,
արդ մի խօսիք գուք զայն՝ զոր չէիք արժան։

Ասեն թէ մի առներ՝ զբանս զայս խոտան,
և մի լիցին ի քէն՝ խնդիրք մեր խափան.
զանունըն գունտին՝ գու յիշեա միայն,
յորում ոչ գոյ կրբէք՝ վնասակար բան։
Յօրմէ ոչ ունելով՝ զերկիւղ կասկածման՝
յիշէ զանուն գէշին՝ լոկ առանց հիման.
յետ այնորիկ ասեն, չէ այդ բաւական,
այլ զամենայն սահման՝ լեր մեզ խոստովան։

Իսկ նա այլ ոչ առնու՝ հանդիստ դադարման
այլ փութապէս յառնէ՝ ի տեղւորէն այն,
և նոցա ի խորհուրդ՝ մըտեալ վարանման,
զի ի դիպօղ ժամու՝ գործեսցեն դարան։
Ապա յետ ոչ սակաւ աւուրց ինչ անցման՝
յաւազ պահոց մինչ՝ ի յեւըն համբարձման,
յաւուր մեծահրաշ՝ տօնին տէրունեան՝
կալան յանկարծ բզնա՝ և ածին յատեան։

Սիրով եհարց ցընա՝ բանիւ մեղմական
դատաւորն և ասաց՝ ով այր պատուական,
դու զինչ ասացեալ ես նոցա ի շուկայն՝
ասա, զի ծանխուք՝ և մեք ի քէն զայն.
Այլ և միւֆթին եղեալ՝ յոյժ աղերսական
սողոսկելով ջանայր՝ պատրել զսուրբ վրկայն.
ասէ, մի երկնչիր, առն գրանըն զայն,
եթէ չասես մատնիս՝ դու դառն մահուան։

Յօղեաց նա դարտասուս՝ իւր յորդահօտան,
աղաղակեաց թէ չիք՝ ասացեալ իմ բան։

ևս միայն Քրիստոսի ևս տրկար ծառայն,
և բայ յայնմանէ զոք՝ ոչ լինիմ՝ դաւան:
Եղարքոսին եղևալ՝ նմա դաւաճան,
հանդերձ երեւի՝ արամբք քաջաջան,
որք մազթէին բզնա՝ բանիւք ողորման՝
յատուկ յատուկ պարզեա տալ խոստաման:

Այլ նա ամենեին՝ ոչ եղև հաւան
և ոչ հրապուրեցաւ՝ ի գանձուց ունայն
վասնորոյ բարկաղեալ՝ չար եղարքոսն այն
և եղ պնդել ըզնա՝ ի մէջ կոճեղան.
Լուսաց անդ աւուրս ութուտասան,
բազում տառապանօք ի մէջ հեծութեան
զի յամենայն ժամ ամէին յատեան
և գանազան կերպիւ՝ խոշտանկէին զայն:

Երբեմն ոպանալօք՝ ահիւ ըպանման,
երբեմն աղաչանօք՝ և գանձուց խոստման,
և այլազգի ազգի՝ բանիւ հեշտութեան
ջանային պատրել՝ ահիւ ձայնըն այն:
Բայց նա իմանալի՝ Հոգւոյն զօրութեան
չորհիւն զօրացեալ՝ համբերեաց որս այն.
Երկոտասան անգամ՝ եկաց ի յատեան,
և դաւանեաց զՔրիստոս համայնից արքայն:

Այլ պիղծ հագարացիքն՝ արք արբուք արեան,
հաւատոյ թշնամիք՝ և ժառանգ նեոան՝
տեսին զի ոչ եղև՝ հնար ուրացման՝
ամենեքեան ընդ այն՝ զամօթի հարան:
Նա և այնու իսպառ՝ ոչ հանդարտեցան,
այլ միւսանգամ կապեալ՝ կացուցին յատեան.
Փողովեցան առ նա՝ նուաստք և իշխան,
զի թերեւ կարասցեն՝ առնել զնա հաւան:

Ասկայն նա ոչ երկեաւ, ի յամբոխէն այն,
որք շուրջ պատեալ էին՝ մարախլանքման.
Վասնորոյ զայրացեալ՝ յոյժ բորբոքեցան,
և հատին առ ժամայն՝ վճիռ քարկոծման:
Այլ մինչ ընթանայր՝ ի տեղըն նընջման,
խնդրէր զազօթս յեղբարց՝ զընթացս կատարման,
յայնժամ՝ զինուորք տեսին՝ զպիղծ մօլայն այն,
ի նկատեալ տեղին՝ ընթացուցին զայն:

Յոյժ խորխոցեալ եղև՝ չար դանիւմանն այն

դի հրամայեցաւ նրմա՝ քար ձգել նախ յայն
յետ այնմ լեալ քարածիրգ՝ ամբօխքն ամենայն,
որոյ ոչ գոյր հաշիւ՝ և թիւ համարման:
Սիրով խաչեցելոյն՝ վասեցաւ սուրբ վկայն,
առ ոչ ինչ համարեաց՝ ըզտան ջանսն զայն,
և հեղ զանմեղ արիւնն՝ փոխան այնմ արեան,
որ հեղաւ ի վր՝ խաչին քառանկեան:

Սուրբ մարմնոյն եղին՝ բազում պահապան
յերեկորեայ ժամէն՝ մինչ ի վաղորդայն.
զոր յայտնապէս տեսին՝ որք պահէին զայն
ճառագայթեալ զմարմնովն լոյսն արփիական:

4. «Մատիք առ Տէր և առէք զլոյս. Ալէլուիա»:

Յայժ զեղեցիկ երեսեցաւ նախախնամութիւն Աժային նախարարի
միում այլազգւոյ ի ձեռն յիպուածոց հրաւարեաց նախընթացից
եւ նեհեւողաց

Այր ոմն ազնուական, որ կոչէր Շէրիֆ Ապտուլլահ, ի քաղաքն
Հալէպ գնեաց ի զուրսանէ միոյ բարբարոսէ զբազում գերիս, զորս
հանեալ էր ի ծովեղերացն Փօքրին Հայաստանի և ի միջի ն^այ էր
աղջիկ մի գեղեցիկ և չնորհալի: Ուստի առժամայն հարաւ ի սէր
նորա տէրն իւր, և սկսաւ ողորական բանիւք աղաչելով, զպարկեա
խոստանալով և կրքնմն երկեցուցանելով ջանայր քարշել զնա ի պիղծ
կրօնն իւր ասելով, թէ արարից զքեզ տիկին ի վերայ ամենեցուն,
իսկ աղջիկն աներջանիկ զինի արիարար հրամարելոյն՝ վերջապէս
անճարացեալ ի բարբարոսական բռնութենէն եւ հաւանութիւն պա-
ւանիլ արտաքսարար զանուն սուտ մարդարէին, և սակայն պահեաց
միշտ ներքսապէս զհաւատն Յիսուսի Քրիստոսի, և այրն եւ նմա
զպատիւ արկնութեան բոս խոստման իւրում և սիրէր զնա յոյժ,
իսկ հայր աղջկանն էր ազգաւ հայ, և առաւուածային անօրինմամբ
մեռաւ կինն և ինքն եղև քահանայ: Զկնի ժամանակաց մտեալ ի
նա՝ կամէր գնալ յերուսաղէմ վասն մխիթարելոյ զվշտայի սիրտ
իւր և եղև նոյնպէս ըմբռնեցեալ ի զուրսանէ, և տարեալ ի Հալէպ
ընդ այլ գերիսն ի վաճառել, ուր նախախնամութիւն Աստուծոյ ա-
րար, զի Շէրիֆ Ապտուլլահն, որ ունէր զաղջիկն ի կնութեան էառ
և զհայր նորին և արար զնա պարտիզպան և աշխատէր բազմօք առ-
քապանօք և ի ժամու կերակրոյն զայր ընդ այլ ծառայակիցսն և
առնոյր ի տիկնօջէն զկերակուր իւր, իսկ նա տեսեալ զծերունին
և ոաց արիւնն և անկաւ զօրթն ի վերայ նորա և նախախնամէր

զնա առատապէս, և ոչ գիտէր, և ոչ իմանայր իսկ զպատճառն, այլ համարէր զայն առնել վասն ծերութեան և պատուական արեաց նորին, քանզի չճանաչէին զմիմեանս Թաւուր միում տեսեալ զնա վշտացեալ տխրութեամբ՝ որ հեղոյր զգտն արտասուս և եհարց զպատճառն այնորիկ տխրութեան, ասելով. դու նախախնամիս յինչն բարեպէս առաւել քան զայլ ծառայս և ուստի են քեզ այգբան տխրութիւնքս։ Աս որ պատասխանեալ՝ ասաց. « իմ տիրուհի, ևս ոչ հառաչեմ և ողբամ ի վերայ գերութեան իմոյ՝ այլ յիշեմ հաշտապազ զկորուստն աղնիւ, զհեղեղիկ և չնորհալի դստերն իմոյ միայնոյ՝ զոր սիրէի իբրեւ զլոյս աչաց իմոյ. սա է որ տեսեալ կայ միշտ ի մէջ սրտիս և որպէս՝ փուշ խոցոտեալ հանէ յաչաց իմոյ զգտն արտասուս և ոչ թողու ինձ վայնլիկ զբարիան, որովք զիս խնամեալ արտփեա, այլ բաշխեմ զայն ծառայակցացն իմոյս։ Յետ աւուրց ամանց և գիտ զնա տիկինն միայնակ, որ հառաչէր և ցաւագին սրտիւ արտասուէր և խանդաղատեալ ի վերայ նորա եհարց ցնա, թէ յորմէ քաղաքէ էր, զորպիսի գործս առնէր. յումմէ՞ ազգականութենէ էր. երբ կորցս զգուստրն և զինչ էր անուն ն^ր և քնդ պատասխանել ծերոյն բան առ բան՝ հայեցաւ յերեսն և ծանեաւ զի նա իսկ էր հայրն իւր, ուստի առժամայն յայտնեաց և ինքն թէ իցէր գուստր նորա փարելով ըզձականապէս։ Արդ՝ յորպիսի արտփանս և մխիթարուի^ն, յորպիսի խնդութիւնս և սրտի բերկրութիւնս անկաւ յանկարծ ի գերութեան խրում քաղաւոր ծերունին ոչ կարեմ պատմել. բայց միայն զայս թէ իբրեւ ետես զգուստրն իւր սիրական՝ տկաւ օրհնել զգերութիւն իւր, յորում եղիտ զկորուսեալ զաւակն միամայր, և ապա ազաչեաց զնա զի մի յայտնեցէ զայս առն իւրում. և յետ այսորիկ աէրն իւր ոչ գիտելով՝ արար զնա հովիւ ժշխարաց իւրոց. և մինչ արածէր զն^ա և զիս զհովիտ մի ի մէջ բլրոց ապահով ի մարդկանէ, ուր կայր վէմ մի սեղանաձեւ առ ոտս բլրոյ միոյ. յիշեաց զքահանայո^ւ իւր, ցանկացաւ մեծապէս առնել զքահանայագործութիւնս և մատուցանել Աստուծոյ զնշխարս քաւութեան. վասնորոյ խնդրեաց մեծաւ ստիպմամբ ի դստերէն իւրմէ նախահոգալ ծածկաբար զգետնս և զայլ ամենայն հարկաւոր պիտոյս առ ի պատարագել։ Իբրեւ ընկալաւ՝ առաւօտու յամենայնում մատուցանէր զաստուծային պատարագն ըստ ծիսի և արարողութեան հայոց, որով և մխիթարիւր հողերապէս։ Արդ՝ զինի ոչ քաղմաց աւուրց զնաց յառաւօտու միում Շէրիֆն տեսանել զոչխարսն իւր և մինչ որոնէր՝ ետես ի հեռուստ զպայծառափայլ ճառագայթս լուսոյ առ ոտս բլրոյ միոյ և հիացաւ յոյժ. իբրեւ մերձեցաւ և ետես զի ահա ծառայն իւր զգետնաւորեալ քահանայական փառօք կայր ուշադրութեամբ առաջի սեղանոյն ի պաշտօն սրբագնութեան և սոսկացեալ առաւելաբար վասն արձակմանց ճառա-

դայթիցն ի սեղանոյ անտի. եհարց ցնա, թէ որպիսի լուսափայլ ակնէ այն, որ սփռէ դայնքան ճառագայթս, որ և զէպ առ նա խոնարհեալ ծունր կրկնեն ոչխարքն և երգիրպագանեն: Առ որ պատասխանեաց պարզապէս թէ նա է սրբութիւն սրբոց երկիրպագեցեալն ի քրիստոնէից, յորում պարունակի մարմին և արիւն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մարդացելոյն վասն փրկութեան ազդի մարդկան. զոր լուեալ Շէրիֆն կամեցաւ առնուլ զմասնիկ մի ի սրբադնութենէն և առեալ ծրարեաց զնա ի մաքուր կտաւի և տարեալ ի տուն իւր՝ եղ ի բարձրագոյն տեղւոջ պատուով, ուր սփռէր ճառագայթս. որով թվիւր գիշերն իբրեւ զօր: Եւ վասն այնքան մեծի սքանչելեացն կամեցաւ ուսանիլ զխորհուրդ հաւատոյն քրիստոնէականի: Ուստի կոչեաց զծառայն իւր և խնդրեաց ստիպմամբ տալ նմա զծանօթութիւն համայնից իրանց հաւատալեացն, և զկնի սակաւուց լուսաւորեցեալ ի հոգւոյն սրբոյ մկրտեցաւ ձեռամբ նոյնոյ քահանային: Արդ՝ մեծ եղև ցնծութիւն արկնոջն և ուրախութիւն սրտի նորա և այլ ոչ ևս կարելով ժուժել, յայանեաց առ ժամայն, թէ քահանայ ծառայն է հայր իւր: Ուստի ուրախութիւն ի վերայ ուրախութեանց տեսեալ Շէրիֆն, արար զտօն մեծ ի տան իւրում՝ յաւուր յայնմիկ: Եւ ասլա ոչ միայն ետ զազատութիւն, այլև բազմօք պարգևօք փարթամացուցեալ տարաւ զնոսա ի ծովեզրն եղ ի նաւ միում աներկեանում և առաքեաց ի հայրենիսն իւրեանց, և ապա ինքն ոչ բաւականացաւ դաւանիլ ի հաւատն Քրիստոսի առանձնաբար, այլ ել ի հրապարակս և սկսաւ քարոզել. զոր լուեալ և տեսեալ տաճկացն շարժեցան ի բարկութիւն և կալեալ զնա եղին ի բանտի. իբրեւ տեսին թէ զկնի այնքան տանջանայն մնաց հաստատուն ի հաւատն Քրիստոսի, յայնժամ հատին վճիռ մահու ի վերայ նորա. և մինչ տանէին ի մարտիրոսութիւն՝ ուսուցանէր ի ճանապարհին զխորհուրդ սրբոյ Երրորդութեան վերացուցանելով զերիս մատունսն ի բարձունս: Եւ վասն յազթելոյ զանհաւատան զայնոսիկ, իբրեւ ելանէր ընդ զուռն քաղաքին՝ բուռն եհար ըզմարմարիոնէն և գոչեաց այսպէս. Ո՛վ Տ՛ր, երկնի և երկրի, եթէ խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան, զոր քարոզեցի ճշմարիտ իցէ, արա զի մատունքս այսօքիք երեքեանք մխիթին ի կարծրագոյն վէմա: Զայս ասելով մխեաց ի նա զիւրաբար որպէս ի մէջ կակղագոյն ձեան. և վասն այսօք սքանչելւոյս մեծ եղև հիացումն ոչ միայն քրիստոնէից այլև մահմէտականաց. և առ ի յիշատակ յաւիտենական ի քաղաքն Հալէպ վերամնացին ի վերայ կարծրագունի վիմին նշանք երկից մատանց նորա մինչև ցայսօր ուր ընդ անցանելն քրիստոնէից, և բազմաց տաճկաց ևս, մխնն պատուով զերիս մատունսն իւրեանց: Ու է նէսիմեն, որ վասն Քրիստոսի հաւատոյն հանին ի նմանէ զմորթն կենդանւոյն. ունի զերգս բազում՝ որով

դաւանի գերբորդութիւնն անճառելի և զմարդեղութիւն Որդւոյն միածնիւ Սա նախ և զինի նահատակութեան արար և զայլ հրաշա-
բայց եւս ոչ գրեմ աստ, վասն զի դիտաւորութիւն իմէ ցուցանել
միայն զգօրութիւն պատարապին, որով լուսաւորեցաւ սա և
փրկեցաւ քառ հոգեոյ, և գերեցեալ քահանայն ազատեցաւ քստ
մարմնոյ հանգերձ իւրով դաւակաւն.

4. Տաղարան. ծաւալ 15X10 սմ: Հողեր և աշխարհիկ հա-
յերէն և թուրքերէն երգեր: Անվարմ հօտը. հաւանօրէն արատ-
գրել է Կարմիր վանքի և ապա Հառիճայի վանահայր Աբրահամ
վարդապետ Մալխասովը. սկսուած է 17 երեօից, առաջին տող
«Յօր նախնկի ոչինչ էի». վերջին տողը «զանձէ կու սատանան»,
կանէ քեզ ծառայ», եր. 31:

Իբրեւ նմուշ գնում ենք հետեւեալ տաղերը:

1

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՊԱՆԼՊԱՆԻՆ

Պուլպուլն նստէր վերայ ցախին	Գնան ի վեր սարերն համ'չէ
Եւ լաց կատէր վերայ վարդին.	Միթէ լսէ, Սանդոզն քեզ
«Իմ գեղեցիկ վարդս է տարած,	Այն քո վարդին հօտն բուրէ
Զիս անողորմ է լացուցած:	Այրած սրտիկդ հովցնէ»:
Հաւքերն ամեն վրաս էկած	Պուլպուլն ելաց, լալով ասաց.
Զիս անողորմ են լացուցած.	Թէ իմ սրտիկս է խիստ խոցուած,
Թէ դու ինչ խիստ մեղաւոր ես,	վարդս տարած:
Որ քո սիրուն վարդն է տարած:	

II

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԳԵՂԵՏԿՈՅ

Կիւզէլ մի եւս երէկ տեսայ ի քաղաքն յԱնիլարիւս.
Թագաւոր մի ինզիր ելաւ Մոսկովա, ի Փօրթուղալա.
Երես տասնկիւր հաւուր զԱւանիւր և զԷտէրնէ:
Ծով աչերուն զին հաւուր զԱւանատարն և զՂալաթիա,
Ելաւ ու խալաթ քաշեց Շամ քաղաքն ի հետ Մարա,
Քաղցրիկ զրուցին համար Շահրապուլ, Պազտաս ու Պասրա,
Կիւզէլն այլ ի խօսք ելաւ, զայն ասաց, ինչ որ պիտենայ
«Թագաւոր, քո դալն ի բարին, քայլափօխդ իմ զլիտւս վերայ.
Աւանիկ ի չորջ առնու, Էտէրնէ իւր հիմն երերայ

Քակի Իսկիւտարու բռններն, Ղալաթիա թող տեղն մնայ,
Կամիս ինձ փէշքէշ լայեղ Շամ քաղաքն ի հետ Մարայ,
Կուտաս զՍտամպուր, տուր ինձ Վենետիկ կամ Սպանիա
Շատ սրբոց մարմինք կայ հոն, նաև մարմին Տ՞ան Յակովբայ,
Կամ տուր զեզր Աստուածածին, որ չինած է յԱրիկունայ:

— «Ազջիկ, վաղ եկ յայն քաղաքէն զանուն Պօլիս,
Մեծ Կստանդիանոս կասեն մէջ նորա թագաւոր կու կենայ,
Մէկ ծալրն ի Հալապ նստի, մէկն կենայ յԱմիդ, մէկն Ամասիա
Մար քեզ ճիհէզ տուած, ու Պուսաս, Քէֆէ ի վերայ,
Թոխատ քաղաքիսուտ գին է, էրզէրում Կէնճէն ի վերայ
Այդ անուշ ծիծաղելոյդ Խորասան, Հիւրմուզն արժենայ,
Քեզ նմանակ Մոսկովն, Մեծ Հոռվո՞ւ փափն կու կենայ,
Զկայ նմանակ քեզի մէկ նայելոյդ գինն է նորա:

Սարկաւազ ասող բանիս յինքենէս առատացայ,
Զայս քաղաքներս ամէն կիւղէլի մի տըւի ճաղայ,
Երբոր սէրն գայ մարգուտն, ոչ մանուկ ասէ և ոչ տղայ,
Ոչ աշխարհական կասէ, ոչ էրէց, սէրն արար զիս գիւտնէ,
Զայսչափ քաղաքներս ամէն կիւղէլի մի ճորտ ու ծառայ,
Աժէ, գինչ որ տուաք, եղբարք, կիւղէլին իսկի գին չը կայ:
Նա, կիւղէլն, որ քեզ սիրէ, զճոգիդ տուր, զաչերդ ի վերայ:

III Տաղ ի վերայ ծովուն.

Հարաւ, յորժամ գու կը հնչես,
Հողիս մարմնոյս կու բաժանես,
* Բան ինչ ունեմ ասել քեզ, ծով,
Ծով, ծով, ծով, զալում ծով,
Մեր երկիրն աստքեա զիս, ծով:
Սաստիկ հողմոյ հանդիպեցայ,
Յորժամ հնչեաց, սասանեցայ,
Սակաւ մի լուր և համբերեա
* Բան ինչ տեսնեմ . . .
Ամենեցուն գայս բան կառնեա,
Թէ միայն զիս կուսասանեա
Պենասի ծով, դու անյաղ ես,
* Բան ինչ . . .

Մեղաւոր արեղէս փրկեա,
Ով իմ Աստուած, զիս ազատեա,
Որ եմ տեղեաւ էրէվանայ
* Բան ինչ . . .
Պենասի ծով, գու իմացիր,
Շարժումն եղեալ դադարեցեր
Զիս եղկելիս յոյժ գերեցեր,
* Բան ինչ . . .
Սաստիկ լինելդ սասանեցայ
Անգամ մի ես ձեռդ անկայ,
Զիս արձակէ և ազատեա
* Բան ինչ ունեմ . . .

Ըստ աւանդութեան, այս տաղը ասել է Երեանցի Սիմէօն
կաթուղիկոսը իւր վարդապետ ժամանակը, երբ Զմիւռնիայի նուե-
րակութիւնից վերադառնում էր Ա. էջմիածին:

IV. Տալ հոգեւոր ի դեմս մօլորեալ ոչխարին.

Ես եմ կորուսեալ ոչխար մօլորեալ ի սուրբ քո հօտէն,
 Հովիւ քաջ, ի վայր հայկանց, բարեխօս քեզ երկիր ամէն,
 Զդիւտ կորստեան իմոյ տեսանել ցանկամ, Տէր, ի քէն,
 Զի մի արտաքս մնացից ի յարկացդ քո լուսեղէն:
 Զքո աստուածային հրամանդ, զոր լուայ ի սուրբ գրքերէն,
 Թէ դառնամ ի միւսանդամ ե խառնիմ ի դասս լուսեղէն.—
 Ան իս կատարեան գհրամանդ զի ծնունդ եմ աւաղանին,
 Տուր ինձ փրկութեան նշան վարդապոյն արեամբդ որ ի քէն.
 Տուր ինձ բնութիւն բարի, կակղացն զսիրտ իմ քարեղէն.
 Տուր ինձ արատաւաց վտակք, որ կաթէ ցօղիցն ի յամպէն,
 Իրբն զաշնան քամի, որ թափէ զտերեւն ի ծառէն,
 Հողմով մեղաց իմոց գրկեցայ յանանց պսակէն.
 Որպէս եկանէ ժամ ժամ թանձրացեալ թուխ ամպ ի ջրէն.
 Ի յորտմանէ նորա սասանի ամէն մտեղէն:
 Որպէս որ մտեղէն մարդիկ հնարիւք զձուկն ի ծովէն
 Որ պահ մի տըտանն ապ, ու մեռնի կարօտ ի ջրէն,
 Որպէս մինչ պարուն լինի՝ ե ծաղկի տերեւն ի ծառին,
 Տէր իմ, ծաղկեցն հոգեով զիս ի սէր քո աստուածեղէն:

V. Տալ վասն հոգւոյ.

Մեր Տէրն յարեկից պայ ի դատաստան,
 Նօտի ի Աթոռ փառաց, առնու պատասխան:
 Արդարքն ժողովին դան յաջակողմն.

Երանի արդարոց, վայ մեղաւորաց:
 Անցաւոր աշխարհիս մի աներ էխարիպար.
 Մաղեղէն կամուրճ կայ, բնկնել խոր վիրապ—
 Գեհնեն, այլ չի լինիր, եղբարք ձար արէք,
 Դու աստէն տիրանաք պիտիր.

Երանի արդարոց, վայ մեղաւորաց:
 Ապահն կու պաշտէ բազակն ու մալը,
 Խսկի միտ չի ամիր իւր հոգու տալը.
 Վաղն դատաստան կու լինի օսնայու կալը.

Երանի արդարոց, վայ մեղաւորաց:
 Մեղքերդ կու գործես քեզ կանես պալայ,
 Գանձէ կու սատանան, կանէ քեզ ծառայ:

